



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 ապրիլի 2015 թվականի N 47-Ա

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖԱՇԻՋՄԻ ԴԵՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐԿԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագի 1.19 կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2015թ. մարտի 19-ի N 214-Ա որոշման՝ որոշում եմ

1. Հաստատել Հայրենական Մեծ պատերազմում գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 70-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային միջոցառումների ծրագիրը և համակարգող հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N1 և N2 հավելվածների:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ»

Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ




2015թ. ապրիլի 2
ք. Կապան

Կ Ա Ձ Մ

Հայրենական Մեծ պատերազմում գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 70-ամյակին նվիրված ՀՀ Սյունիքի մարզային միջոցառումները համակարգող հանձնաժողովի

- | | |
|---------------------|---|
| 1. Ս. Խաչատրյան | ՀՀ Սյունիքի մարզպետ, /նախագահ/ |
| 2. Վ. Գրիգորյան | ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, /տեղակալ/ |
| 3. Վ. Դավթյան | ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, /տեղակալ/ |
| 4. Հ. Ալեքսանյան | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| 5. Ս. Ավետիսյան | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ |
| 6. Ս. Դավթյան | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի պետ |
| 7. Լ. Մարության | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ |
| 8. Ա. Հայրապետյան | Կապանի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 9. Վ. Ադունց | Գորիսի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 10. Ա. Հովհաննիսյան | Մեղրիի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 11. Մ. Զաքարյան | Ագարակի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 12. Վ. Գևորգյան | Քաջարանի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 13. Ա. Հակոբջանյան | Սիսիանի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 14. Մ. Մկրտչյան | Սիսիանի զինկոմ /համաձայնությամբ/ |
| 15. Մ. Պողոսյան | Գորիսի զինկոմ /համաձայնությամբ/ |
| 16. Լ. Գրիգորյան | Կապանի զինկոմ /համաձայնությամբ/ |
| 17. Դ. Անանյան | Մեղրիի զինկոմ /համաձայնությամբ/ |

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար



Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ԱԿՏԵՐԱԶՄՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖԱՇԻՋՄԻ ԴԵՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ԱՄՅԱԿԻՆ ՆԿԻՐՎԱԾ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/հ	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը	Ժամկետը	Պատասխանատու մարմինը (ստորաբաժանումը)
1	2	3	4	5
1	Հայրենական մեծ պատերազմի մասնակից վետերանների անվանացուցակների ճշտգրկման գործընթացի կազմակերպում	ՀՀ Սյունիքի մարզ	Փետրվար	Մարզպետարանի գինկոմիսարիատներ
2	Մարզկենտրոնում և մարզի բոլոր քաղաքային և գյուղական համայնքներում 2015թ. մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված կազմակերպել տոնախմբություններ, հանդիսավոր երեկոներ, պսակադրություններ՝ «Լռության թուպ»>, գինվորականների, ՀՄՊ-ի վետերանների, երիտասարդական կառույցների և աշակերտների մասնակցությամբ շքերթներ, տոնական հրավառություն:	Քաղաքային և գյուղական համայնքներ	2015թ. մայիսի 9-ին	Մարզպետարանի քաղաքային և գյուղական համայնքներ
3	1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի վետերանների ընդունելություն մարզային և համայնքային ղեկավարների մոտ, պատվոգրերի, նվերների, «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 70-ամյակ» հոբելյանական մեդալների հանձնում	ք. Կապան	2015թ. մայիս	Մարզպետարանի համայնքի ղեկավարներ

4	<p>Մարզային լրատվամիջոցներով հեռարձակել և հրապարակել հաղորդումներ, հոդվածներ և ակնարկներ «Մեր սուրը փառքով դրեցինք պատյան», «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել» խորագրերով:</p> <p>Լայնորեն լուսաբանել պատերազմում մարտական գործողություններին սյունեցիների մասնակցությունը:</p> <p>ՀՄՊ-ին նվիրված ֆիլմերի ցուցադրում մարզային հեռուստածրագրերով:</p>	Քաղաքային համայնքներ	2015թ. փետրվար-մայիս	Մարզում գործող ՁԼՄ-ներ
5	«Աշխարհն առանց պատերազմի» երեխանրի կավճանկարների մրցույթի կազմակերպում	Քաղաքային համայնքներ	2015թ. ապրիլ	Քաղաքապետարաններ
6	«Դիպուկ հրաձիգ» դպրոցականների մարզային մրցումների կազմակերպում և անցկացում ՀՀ ՁՈՒ -ի զորամասերի հրաձգարաններում:	Քաղաքային և գյուղական համայնքներ	2015թ. ապրիլ	Մարզպետարան համայնքներ
7	Մարզի համայնքներում Հայրենական մեծ պատերազմին վերաբերվող հուշահամալիրների, հուշարձանների, հուշաքարերի, գերեզմանների խնամում, վերանորոգում, վերականգնում, տարածքների մաքրում և բարեկարգում: Հատուկ առանձնացված տարածքներում ծառատունկի կազմակերպում՝ «Հարգանքի տուրքի միամսյակ»	Քաղաքային և գյուղական համայնքներ	2015թ. ապրիլ-ամիս	Քաղաքային և գյուղական համայնքներ
8	Մարզի բոլոր ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում հայրենասիրական թեմատիկ դասերի կազմակերպում, «Մենք հաղթանակի սերունդներն ենք» խորագրով շարադրությունների մրցույթների անցկացում և ամփոփում	Քաղաքային համայնքներ	2015թ. ապրիլ-մայիս	Մարզպետարան
9	Մարզի տարածքային պոլիկլինիկաներում Հայրենական Մեծ պատերազմի, թիկունքի և	Քաղաքային համայնքներ	2015թ. փետրվար-մայիս	Մարզպետարան, համայնքներ

	աշխատանքի վետերանների պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկման տրամադրում, «Բաց դռների» օրերի կազմակերպում:			
10	Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ուսումնասիրել ՀՄՊ-ի, թիկունքի վետերանների զոհվածների այրիների սոցիալական վիճակը, միջոցներ ձեռնարկել դրանք բարելավելու ուղղությամբ:	Քաղաքային և գյուղական համայնքներ	2015թ. փետրվար-ապրիլ	Մարզպետարան, քաղաքային և գյուղական համայնքներ
11	1941-1945թթ. հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված մարզի թանգարաններում «Ռչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել» խորագրով ցուցահանդեսների կազմակերպում, մարզի նկարիչների աշխատանքների ցուցադրում:	Քաղաքային համայնքներ	2015թ. ընթացքում	Մարզպետարան, համայնքներ
12	1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված կազմակերպել Մեղրիում տեղակայված ՌԴ-ի սահմանապահ զորքերի և մարզի ՀՊ վետերանների հետ հանդիպումներ, հուշ-երեկոներ:	Քաղաքային համայնքներ	2015թ. մայիսի 8-ին	Մարզպետարան, քաղաքային համայնքներ Ռուս-հայկական համագործակցություն ՀԿ
13	Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին թատերական ներկայացումների, հանդիպումների, համերգների, հայրենական մեծ պատերազմին նվիրված վավերագրական և գեղարվեստական ֆիլմերի ցուցադրում:	Քաղաքային համայնքներ	2015թ. ընթացքում	Մարզպետարան, համայնքներ

14	<p>Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված մարզի բուհերում, ուսումնական հաստատություններում, դպրոցների բարձր դասարաններում «Հայերի ներդրումը Հայրենական Մեծ պատերազմում»,</p> <p><< Հայրենական Մեծ պատերազմի թեման հայ կերպարվեստում >> << Հայրենական Մեծ պատերազմի արտացոլումը հայ գրողների ստեղծագործություններում >> խորագրով կազմակերպել գիտապրակտիկ կոնֆերանսներ:</p>	Քաղաքային համայնքներ	2015թ. մարտ	Մարզպետարան, համայնքներ
15	<p>1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված կազմակերպել սպորտային մրցումներ՝ նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության մարզային ռազմամարզական խաղերի կազմակերպու, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում «Սպորտլանդիա-2015» մարզական զանգվածային միջոցառումների կազմակերպում, մասնակից դարձնելով մարզում տեղակայված զորամասերին, ՌԴ-ի սահմանապահ զորքերի մարզիկներին:</p>	Քաղաքային համայնքներ	2015թ. Մայիս-հունիսի	Մարզպետարան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝



Ռ. Ղազարյան